

6792

891-99

24-91

2003

Ճ-ՏԻՇԻՅՑ
391.542-3
ՁՁ-Ա

391.542-3
Ա-ՅԶ

ԲԱՆԳՈՐԱ-ԳՅՈՒՂԱՅԻԱԿԱՆ
ԳԵՂԱՐԳԵՍԱԿԱՆ ԳՐԱԳԱՐԱՆ

№ 18

Քաղաքական Լուսավորության
Ինստիտուտի Վարչություն

№ 18

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ

ՊԱՏԻՎԱԾՔՆԵՐ

ՊՐԱԿ ՅԵՐԿՐՈՐԴ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
Յ Ե ր Ե վ ա ն 1929

2011

185/45 (8 Pages)

25397

55025
10002

10005
22052

89458

4-99 up.

1120

ԲԱՆՎ. ԳՅՈՒՂ. ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ

№ 18

Վ Ա Ր Զ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

№ 18

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

ՊՐԱԿ ՅԵՐԿՐՈՐԴ

530



ՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՏԱՐԱԿՈՒՅՐՈՒՆԸ. — ՇԵՆԿԱՆ, 1929

Հր. № 1048. Դրանեպար № 1734 (բ). Տիրաժ 206
 Պետերատի առաջին տպարան Վաղարշապատում
 Պատվեր № 50

ԲԱՆՎՈՐՈՒՅԻՆ

1.

Նույնիսկ այդ ուշ ժամին տեքստիլ գործարանի թաղամասն ամալի չեր: Մինչդեռ քաղաքի մյուս ծայրամասերն արդեն լուել ելին և այդտեղի փողոցներում վոչ վոք չեր յերևում, տեքստիլ գործարանի թաղամասում, գլխավորապես դեպի գործարան տանող փողոցում անց ու դարձը դեռ չեր դադարել: Անցնում ելին բանվորներն ու բանվորուհիները, վորոնք գնում ելին գործարան, յերկրորդ հերթից դուրս յեղնողներին փոխարինելու: Իսկ գործարանի կողմից բարձրածիծաղ խմբերով վերադառնում ելին աշխատանքը վերջացրած բանվորները: Անցավ մի բեռնակիր ավտոմոբիլ, անցավ յերկրորդը, քիչ հետո յերրորդը: Այդ քաղաքի հեռու մասերում ապրող բանվորներ ելին, վոր գնում ելին տուն:

Այդ բանվորներից շատ քչերն ելին, վորոնք մասնավոր բնակարաններում ելին ապրում, և նրանց բնակարանը հեռու չեր: Նրանք ապրում ելին գործարանի հանրակացարաններում, վորոնք

գտնվում ելին գործարանի կողքին։ Այդ հանրակացարաններում ապրում ելին գլխավորապես այն բանվոր-բանվորուհիները, վորոնք մի ժամանակ չեղել են վորբեր, — վորբանոցային չերեխաներ։ Նրանք հիմա չեւ չափազանց չերիտասարդ են և նրանցից ամենամեծը հազիվ քսանչորս տարեկան լինի։ Ապրում են յոթ-յոթ, ութ-ութ յուրաքանչյուր սենյակում։ Իսկ այդպիսի սենյակներ հանրակացարաններում ութ հատ են։

Իսկ գործարանն այդպիսի հանրակացարաններ՝ առաջիմ գլնի միայն չերեր հատ։ Մեկը աղաների համար, իսկ մյուս չերկուսը՝ աղջիկներին։

2.

Համար չերկու հանրակացարանի դուռն առաջ բացվեց և արագ փակվեց։ Ներս մտնող Աղափին միայն մի բառ, — «անամոթ» — շարտեց դեպի մթուփունը, դեպի դուրս և ծիծաղելով փակեց դուռը։ Յերբ նա շուռ չեկավ դեպի ննջարանը, ծիծաղը փոխվեց լրջության։

— Քնած են...

Նա մտավ ննջարան և նորից շնջաց, կարծես իրեն համոզելու համար.

— Քնած են...

Իսկ նրա գեմքի վրա՝ գարմանքի արտահայտություն.

— Քնեցին... ինչպես։ Ինչպես այսքան շուտ...

Չե վոր գործարանից դուրս չեկան միասին։ Նրանք, այսինքն իրենից և Վարդգեսից բացի բոլոր մյուսները, ուղիղ ճանապարհով գնացին իրենց տները կամ հանրակացարան, իսկ ինքն ու Վարդգեսն անցան այն մյուս ճանապարհը և այնտեղով քայլեցին դեպի հանրակացարան.

Ճիշտ է, մի քիչ դանդաղ ելին քայլում, նույնիսկ մի չերկու անգամ կանգ առան, ճիշտ է, վոր «այդ մյուս» ճանապարհը սովորականից մի քիչ ավելի չերկար է, այնուամենայնիվ, քնել այսքան շուտ...

— Միթե այդքան շատ ժամանակ անցավ...

Աղափին հանվեց և մտավ ա՛յ կողին, բայց քունը չեր տանում, նա մի տեսակ էր։ Մի տեսակ՝ տխուր և ուրախ։ Դա մի տրամադրություն է, վորը բառերով դժվար կլինի արտահայտել։ Հաճախ այդ տրամադրության մեջ են լինում այն մարդիկ, վորոնք հիշում են իրենց դժվարին, տխուր անցյալը և համեմատում են պայծառներեկալի հետ։

Այդ տրամադրության մեջ են լինում նաև սիրահարվածները։

Աղափին մտածում էր ..

Մրանից միքանի տարի առաջ, քաղցի ու ցրտի տարիներին, ինքը նույնքան գեղեցիկ էր, ինչպես և հիմա: Այդ եր պատճառը, վոր իր մայրը մեռնելու ընկելին իրեն կանչեց, շոյեց գլուխն ու ասաց.

— Աղա՞նքի ջան, պատվով չեղիր. նամուսդ ձեռքիդ պահիր... ազնիվ աղջիկ չեղիր...

Յե՛վ Աղա՞նքին մտածում էր կատարել մոր ցանկութունը, լինել «պատվավոր աղջիկ»:

Ինչ ուներ ինքը Վոչինչ չունեւ: Ընդունվեց վորբանոց, վորպեսզի սովից չմեռնի: Իսկ դրսում, վորբանոցի պատերից այն կողմ, վոչ միայն սողն էր, այլև արյունը: Կարելի չէր մեռնել վոչ միայն սովից, այլ նույնիսկ պատահական մի գնդակից...

Ինչ ուներ ինքը, — Աղա՞նքին: Վորբ էր բոլոր վորբերի նման: Գեղեցիկ աղջիկ էր: Ամերիկյան հասամաշ շորեր ուներ հագած:

Այդ բոլորը լավ: Բայց ի՞նչ ուներ Աղա՞նքին, ի՞նչ թանգագին բան ուներ, բացի իր «պատվից»: Յե՛վ նա պահում, պահպանում էր իր «պատիվը»:

Մի որ վորբանոցի կառավարիչը նրան կանչեց իր սենյակը և նա հասկացավ կառավարչի մատգրութունը: Գնաց, բաց նրա, այդ «կեղ-

տոտ մարդու» առաջին փաղաքշանքից անմիջապես հետո, դուրս թռավ սենյակից:

Այդ որվանից, նա դարձավ մարդկանցից փախչող, նրանցից խորթ:

Վոչ մի լավ մարդ չէր տեսնում իր շուրջը: Բոլորը վատ էլին ու չար, և բոլորն ուզում էլին հափշտակել իր միակ «հոգեպահուստը», — «պատիվը»:

Յե՛վ Աղա՞նքին, այդ որվանից սկսած, ավելի և ավելի ուշադրութուն դարձրեց իր «պատիվը» պահպանելու վրա: Իր միակ թանգագին բանը...

— Աղա՞նքու նման մաքուր չեղիր... հիշում էր նա իր մոր խոսքերը:

4.

Շատ բան փոխվեց վորբանոցում հեղափոխութունից հետո, բայց այդ շատը դեռ քիչ էր թվում վորբերի համար:

Ճիշտ է, չեկան լավ կառավարիչներ, «բարի և ազնիվ» մարդիկ, բայց ինքն ու մյուս վորբերը դեռ չէին կարողանում մոռանալ անցյալի, շատ մոտիկ անցյալի դառնութունները: Նրանք դեռ մարդկանցից քաշվող էին, անվստահ, և դժվար էին ըմբռնում այն բանը, վոր «այս կառավարութունը, բանվորների ու գյուղացիների կառավարութունը, նաև վորբերի կառավարութունն է»:

Այսպես եր ասում նոր կառավարիչը:

Այն, ինչի մեջ վոր չկարողացավ համոզել կառավարիչը, համոզեց կյանքը: Վոչ մի պատ չմաց վորբանոցների և «դրսի» միջև: Վոչ մի անվստահութուն չմաց:

Յերբ վտանգ ե սպառնում մարդու կյանքին, նա խնայում ե իր կյանքը և պաշտպանում: Յերբ վախ ե սպառնում մարդու «պատվին», նա «պատիվ» ե պաշտպանում: Իսկ չերբ վոչ մի վտանգ չկա, մարդը դառնում ե անփութ իր կյանքի ու «պատվի» նկատմամբ և սկսում ե զբաղվել ուրիշ բաներով:

Այսպես ել պատահեց Աղափու և ետ: Պատահեց կամաց-կամաց, աստիճանաբար, բայց պատահեց: Ընդարձակվեց նրա տեսողության դաշտը, ընդարձակվեց, և չերբ մի որ չեկավ նոր կառավարիչը և առաջարկեց ցանկացողներին մտնել Փաբգործուս, ինքն առաջին ցանկացողը չեղավ:

Կյանքն ինչքան բազմազան ե և ինչքան լավ: Կյանքն ինչքան վատ կարող ե լինել մի դեպքում և լավ մի ուրիշ դեպքում: Աղափին Փաբգործուսում իրեն զգում ել աչքան ուրախ, աչքան լավ: Այդ միջավայրում բոլորն ընկերներ ելին և իրար հարազատ: Շուտով ինքն ել դարձավ հարազատ ընկեր:

Սովորեց դադարի վրա աշխատել և մտավ գործարան: — Տեքստիլ գործարան...

Այս ե Աղափու անցյալը. — անցյալի պատմութունը:

5.

Աղափու քունը տանում եր: Նա շտապեց վերջացնել, կծկել իր մտքերի թելը և հանգիստ քնել: Նա ժպտաց: Հիշեց «պատիվը»: Ի՞նչ եր... Իսկ հիմա, չեթե մեկն իրեն հարցնի այդ մասին, նա կպատասխանի.

— Այն, ինչ վոր կարող ե փաստ հասցնել պրոլետարիատի շահերին, այն ե վատը: Սիրել պրոլետարիատի շահերը, նշանակում ե լինել պատվասեր:

Այդ ե պատիվը...

Այդ մասին նրան սովորեցրել ե վոչ միայն քաղդարոցը, այլև կյանքը:

— Անամոթ, առանց ալկալուլթյան ուզում եր, վոր... Իսկ ներսում քնած ելին: Գուռը շրջակացրի: Կարող ելին արթնանալ:

... Հիմի նա չել, չերևի, պառկել ու մտածում ե: Գուռե նա չել հիմի վորեք բան հիշեց: Գուռե նա չել ժպտաց:

Վաղը կամ մշուս որը մի մահճակալ կա-
դատվի տղաների հանրակացարանում և մի մահ-

ճակալ աղջիկների հանրակացարանում: Ձագսի
քարտուղարը շուտ կտա № 346 թերթիկը և կգրի.

— № 347...

Իսկ հանրակացարանում, — յերկու հանրա-
կացարաններում կնդունվեն յերկու ուրիշները...

Աղափնին քնեց:

Գործարանում աշխատում եր յերրորդ
հերթը:

|||

ՄԱՐՄՆԻ ԶԱՅՆԸ

1.

Արշավիրն այնպես գիտեր, թե մարդիկ բա-
ժանվում են յերկու տեսակի: Ֆիզիկական աշ-
խատանքով զբաղվող մարդիկ և մտավոր աշխա-
տանքով զբաղվող մարդիկ: Ինչը պատկանում եր
վերջինների թվին: Յուրաքանչյուր կոմյերիտա-
կանի, վորն ապրում եր այդ քաղաքում, շատ
լավ ծանոթ եր Արշավրի վտիտ կազմվածքը,
ներս ընկած կրծքով, աչքերն անփայլ և ամբողջ
մարմնով կարծես փխրուն կավ:

Հաճախ նա մտնում եր վորևե տեղ գեկու-
ցում տալու կամ վորևե ժողովի մասնակցելու
համար: Նա շատ տեղերում եր լինում և շատ
տեղերում եր գեկուցումներ կարդում: ԲՆԻՂ,
Ժողով, նիստ, խորհրդակցութուն և այդպես ան-
վերջ: Իսկ յեթե նկատի ունենանք, վոր այդ բո-
լորի հետ միաժամանակ նա կոոպերատիվի աշ-
խատավոր եր, ապա պատկերը լրիվ կլինի:

Յերեկոյան Արշավիրը հոգնած վերադառնում
եր տուն, բայց այնտեղ ևս նա հանգիստ չուներ:
Նրա սեղանի վրա միշտ կգտնվեին դիագրամ-

ներ, աղյուսակներ, ցուցակներ, շրջաբերականներ և ելի հազար ու մի թղթեր, վորոնք նա կարդում եր, արտագրում, կետեր նշանակում և այլն: Հաստատ կարելի չեր ասել, վոր նրա սեղանի վրա, չեր չեղել վոչ մի որ, վոր կիսատ գործ չգտնվեր: Կամ սկսված-չվերջացրած, կամ վերջացրած, կամ դեռ չսկսած և կամ՝ վերամշակման կարոտ:

Թվում եր, վոր Արշավրի ամբողջ կյանքը բաղկացած եր թղթերից, ժողովներից ու կոպերատիվից: Այսինքն այն չերեք մասերից, վորոնք կազմում ելին նրա առօրյա աշխատանքի հիմնական տարրերը: Չոր, սառը, — Արշավիրը թողնում եր այնպիսի տպավորութուն, վոր կարծես նա չունի վորևէ զգացմունք և ապրում եմիայն ուղեղով: Կարելի չեր չեմթադրել, թե նա վոչ մի վայրկյան հաճույք չի կարող ստանալ վոչ չերաժշտութունից, վոչ թատրոնից և վոչ ել վորևէ գեղեցիկ տեսարանից: Միակ զգացմունքը, վոր կար նրա մեջ, դա սերն եր դեպի իր ընկերները, դեպի քաղաքի կոմյերիտական և աշխատավոր լերիտասարդները: Այդ նրա տարերքն եր և այդ տարերքի մեջ նա պատրաստվում եր դուրս գալու քաղաքական մեծ գործիչ, մեծ հեղափոխական:

Այդ նրա բաղձանքն եր:

Բայց Արշավիրն ևս, ինչպես մյուս մարդիկ, ուներ զգացմունքներ և ապրում եր այդ զգացմունքներով: Այդ բանն սկսվեց մի ամառնային լուսնիկ չերեկո, քաղաքի վերին մասերում, ուր նվազ ելին ելեկտրական լույսերը: Յեվ ուն հետ: Գոհարիկի: Այն Գոհարիկի, վորն իր հետ միասին պաշտոնավարում եր կոպերատիվում և վորին քանի անգամներ նա ինքը դիմել եր սառը տոնով ու բավական պահանջկոտ, հիշեցնելով, վոր նա դեռ չի վերջացրել իրեն հանձնարարված գործը: «Զգճգուցներ պետք չեն, ընկեր Գոհարիկ, շտապեցեք»: Այս մի նախադասության մեջ կարելի չե ամփոփել Արշավրի վերաբերմունքը դեպի Գոհարիկը: Իհարկե, գործի ժամերից հետո մի քիչ ավելի ընկերական:

Բայց այդ չերեկո ուրիշ կերպ չեղավ: Նա և Գոհարիկը միասին բարձրացան վերև, դեպի քաղաքի ամալի փողոցները, ուր կարելի չեր խոսել, վիճել, առանց մեկի կողմից լավելու: Շատ հաճախ եր պատահում, վոր Արշավիրն ու Գոհարիկն այդ փողոցներում կատարելին իրենց զբոսանքները չերեկոյան ժամերին: Յեվ սակայն, վոչ մի որ առանձին վոչինչ չեր տեսել Արշավիրն այդ զբոսանքների մեջ: Այդ վոչ թե նրա-

նից, վոր նա չունէր յերիտասարդին հատուկ
աջնալիսի զգացմունքներ, ինչպէս սիրելը և այլն,
այլ վորովհետեւ նրանց պտուկտներն ինքնաբերա-
բար ուրիշ թեքում ելին ստացել: Քաղաքական
խնդիրներ, տնտեսական հարցեր, — ահա նրանց
խոսակցությունների նյութը: Իսկ այդ, ինչպէս
ասացինք, Արշաւրի տարերքն էր: Այդ պատ-
ճառով ել նա շատ քիչ էր հետաքրքրվում Գո-
հարիկի «աղջկային» կողմերով: Նա իր ընկերու-
հին էր, իր սիրելի ընկերուհին, և միայն այդ-
քանը:

Այդ յերեկո՝ քաղաքական ու տնտեսական
աշխարհի բոլոր նյութերն սպառվեցին, թե ինչ:
Յեղավ մի ժամ, չերբ չերկունս ել լուռ քայլում
ելին: Գոհարիկը, թեեւ նույնպէս հետաքրքրվում էր
Արշաւրի սիրած հարցերով, բայց քիչ չէին աչն
որերը, չերբ նա Արշաւրին առաջարկում էր
ընդհատել խոսակցությունը և անցնել մի ուրիշ
նյութի: Հայտնի չէ, թե «ուրիշ նյութ ասելով»
հատկապէս ինչ էր հասկանում Գոհարիկը, բայց
Արշաւրը, լսելով նրան, ընդհատում էր գլուղա-
տնտեսական կոռպերացիայի մասին իր դիսեր-
տացիան և անցնում էր սպառողական կոռպե-
րացիային: Իսկ այդ որն ընդմիջումն ինքնիրեն
յեկավ բայց վոչոք չեր անցնում ուրիշ նյութի:
Այդպէս լուռ քայլեցին մի ժամ, ապա բաժան-
վեցին:

Այդ էր ամբողջը: Բայց Արշաւրի համար
արտակարգ մի բան կար այդ ամբողջի մեջ: Ինչ
վոր զգացմունքային բան: Նա ճանապարհին և
տանը մտածում էր: Յեւ դեպքեր, չնչին, փոք-
րիկ դեպքեր, յերկրորդական մանրամասնություն-
ներ, սկսեցին ուրիշ կերպ յերևալ իր աչքին:
«Գոհարիկն անտարբեր չէ իմ հանդեպ»: Այս էր
հիմնական իմաստը: Յեւ այս իմաստն ուրիշ բո-
վանդակություն էր տալիս պատահած չնչին դեպ-
քերին ու խոսակցություններին: Ահա թե ինչ:
Այ, հիմա արդեն կարելի չէ հասկանալ, թե ին-
չու Գոհարիկը յերբեմն նայում է իրեն ներսու-
զող հայացքով: Հիմա հասկանալի չէ նաև աչն,
թե ինչու նա հաճախ բաժանվում է իր ընկեր-
ներից և իրեն հետ է զբոսնում: Յեւ վերջի-
վերջո՝ անցյալ որվա աչն հարցը, թե «չերբ պի-
տի ամուսնանաս, Արշաւր»... Այս բոլոր ման-
րունքը, վոր մի ժամանակ Արշաւրին թվացել էր
ընկերական վերաբերմունք, այժմ արդեն, այդ
յերեկոյից հետո, ստանում էր ուրիշ գունավո-
րում:

Այնինչ, անաչառ լինելու համար պետք է
ասել, վոր Գոհարիկի վերաբերմունքի մեջ վոչ
մի փոփոխություն չեր յեղել վոչ առաջ, վոչ ել
այդ որը: Իսկ այդ վերաբերմունքի մեջ, կարելի
չէ ասել, վոր սիրային վոչինչ չկար: Զուտ մտե-

ըիմ ընկերական, ուրիշ վոչինչ: Բայց սիրահար-
վողները հետ հաճախ այդպես և պատահում:
Յերբ ինքը սիրում է, նրան թվում է, թե դի-
մացինն էլ անտարբեր չէ իր հանդեպ: Այդ բանն
եր տեղի ունեցել նաև Արշավրի հետ:

(Իհարկե, դա չի նշանակում, վոր չեթե Գո-
հարիկն իմանար նրա սիրահարվելու մասին, ան-
պայման պետք է մերժեր, Գուցե և պատառ-
խաներ զրական: Արշավրը վատ տղա չէր, թեև
նրա նիհար կազմվածքն ու վտիտ դեմքը, դիմա-
ցինի վրա թողնում էին հիվանդի տպավորու-
թյուն):

3

Արշավրից ստացվող հիվանդոտ տպավորու-
թյունն այնքան էլ սխալ չէր: Շատ հաճախ դի-
շերները, քնած ժամանակ նրան թվում էր, թե
իր կրծքի վրա ինչ վոր ծանրութուն կա դըր-
ված. — ծանր քար: Առավոտյան, չերբ նա արթ-
նանում էր, փոխանակ իրեն կազդուրված զգալու,
ավելի ջարդված էր զգում և հոգնած. կարծես
գիշերը չէր քնել: Արշավրի հետ գլխացավ հա-
ճախ էր պատահում: Գործի լեռուն ժամանակ
պատահում էր, վոր նա ուզում էր քնել կամ թույլ
մեկնվել անկողնի վրա: Այնքան հոգնած էր զգում
իրեն: Այդպիսի ըոպեններին նա գիտակցում էր,

վոր կոմյերիտական ու հասարակական լարված
աշխատանքները հյուսիս են իրեն: Յեվ նա այդ-
պիսի ըոպեններին չերազում էր մի զով ու մա-
քուր ամառանոցի մասին, սպասելով արձակուր-
դին: «Կգնամ, — մտածում էր նա, — կկազդուրվեմ
և կգամ: Ել ինձ հիվանդ չեմ զգա»:

Հաճախ ընկերներն ասում էին նրան, վոր
նա մտածի իր առողջության մասին: Յեվ չերբ
նա հարցնում էր՝ «Ինչ անեմ», ընկերներն ա-
ռաջարկում էին զբաղվել ֆիզկուլտուրայով, —
մարմնամարզությամբ: Այդ մի բառը բավական
էր Արշավրին ծիծաղ պատճառելու համար: Ինչ-
պես չէ: Մարմնամարզություն: Յեվ այդ մարմ-
նամարզությունը պետք է հրաչք կատարի և ի-
րենից դուրս բերի մի նոր Հերկուլես: — Վոչ, —
ասում էր նա, — հասարակության մեջ մարդկանց
մի մասն, զբաղվում է մտավոր աշխատանքով,
մյուսը՝ ֆիզիկականով: Յես մտավոր աշխատանք
եմ կատարում: Մարմնամարզությամբ թող զբաղ-
վեն ֆիզիկական աշխատանք կատարողներն ու
պրոֆեսիոնալ սպորտիստները... Այդ խոսքերն
ասելուց հետո նա հեռանում էր իրեն ճնշող այդ
խոսակցությունից: «Ինչո՞ւ համար աշխարհում
դեռ մտավոր աշխատանքը չի զնահատվում ֆի-
զիկականի չափ».— դառնացած մտածում էր նա:
Նրան միայն մի փոքր հանգիստ էր պետք:

1005
92052
1005
92052
1005
92052

Անքան, վոր մի քիչ ժամանակով իրեն զգար համեմատաբար ավելի կազդուրված: Իսկ հետո, հետևյալ տարի՝ նորից ամառանոց: Յեւ աչդպես եւ վարվում եր նա: Սակայն, ամառանոցից վերադառնալուց մի ամիս հետո ելի կրկնվում եր հին յերգը: Այժմ, յերբ իր արձակուրդը մոտենում եր, նա նորից մտածում եր հանգստանալու մասին: Մի շաբաթ առաջ նա նամակ եր ստացել Մոսկվայի ողանավորդական դպրոցում սովորող իր ընկերոջից, — Միհրանից, և այժմ սպասում եր նրան: Նա գալու յեր և իրենք միասին գնալու ելին ամառանոց:

4

«Սերը, — դա մի տղայի և մի աղջկա ընկերական փոխհարաբերությունների ամենամտերիմ տեսակն ե: Այդ պատճառով ել չկա սեք այնտեղ, ուր չկա ընկերական փոխհարաբերություն, այլ կերպ ասած՝ ուր չկա կարծիքների ու դադափառների նույնատեսակություն: Սերը, — դա միայն կիրք չե: Կիրքը սիրո մեջ՝ դա բնության տվածն ե: Կա նաև կուլտուրայի բերածը: Այդ յերկուսից ե բաղկացած սերը»:

Ահա Մերշափի թեորիան սիրո մասին: Կենցաղային խնդիրներին նվիրված ժողովների ու զրույցների ժամանակ նա այդ թեորիան հաճախ

եր առաջադրել և անցկացրել: Այժմ լեկել եր ժամանակը, վոր նա իր կաշվի վրա փորձեր իր թեորիայի ճշտությունը: Նա շրջում եր փողոցով, մտածում եր Գոհարիկի մասին և ըթի տակ մըթմըթում եր իր Ֆորմուլան: Այո, շատ լավ կլինի: Ուղղակի կզնա և կասի. «սիրում եմ»: Առանց մեղչանական ձգձգումների: Կկանգնի և պատասխանի կսպասի: Նա կպատասխանի: Այո կամ վոչ: Բայց հավանական ե, վոր «այո» պատասխանի: Առանց մեղչանական ձգձգումների: Լավ կլինի:

Միքանի անգամ ուղեց գնալ նրա մոտ և հենց աչդպես ել վարվել, բայց հետո մտածեց, վոր մի յերկու որից հետո ինքը մի ամսով հեռանում ե քաղաքից և ցանկալի չե, վոր սիրո մեղրամսի չորս-հինգ որը դեռ չանցած, բաժանում տեղի ունենա: Յեւ հետո՝ կար նաև մի ուրիշ հանգամանք: Այդ այն եր, վոր տարված սիրալին «պարապմունքներով», նա կարող եր զիջել ամառանոց գնալը, վորը, սակայն, իրեն համար այնքան անհրաժեշտ եր:

Այս եր պատճառը, վոր նա շարունակ հետաձգում եր իր «խոսակցությունը» Գոհարիկի հետ: Իսկ մինչ այդ, ամեն ինչ առաջվա նման եր շարունակվում: Դարձյալ Գոհարիկը, դարձյալ՝ «Մերշափը, գնանք մի քիչ զրուցենք», և դարձյալ

կիսամոլթ ու սակավամարդ փողոցները: Միակ նոր բանը, վոր կար, այդ աչն եր, վոր Արշավիրն այժմ Գոհարիկի վերաբերմունքի յուրաքանչյուր կետում տեսնում եր սիրահարութեան նոր և նոր հավաստիքներ ու նշաններ: Այո, Գոհարիկն անստարբեր չե իր հանգեպ...

Մի ուր, չերբ Արշավիրը մտածում եր Գոհարիկի աչն խոսքի վրա, թե՝ «Արշավիր, չե՞րբ պետք ե ամուսնանաս», ինքնաբերաբար հարց տվեց նրան. — «Իսկ դու չե՞րբ պիտի ամուսնանաս, Գոհարիկ»: Գոհարիկն ուրախ ժպտաց և պատասխանեց, վոր աչն ժամանակ, չերբ Արշավիրն այդ կառաջարկի: Սովորական, չափազանց սովորական այդ կատակն այս անգամ ուրիշ կերպ լեւեաց Արշավիրն և նա հրճվեց: «Ափսոս, վոր շուտով ամառանոց եմ գնալու», մտածեց նա, լուռ նայելով Գոհարիկին:

5

Միհրանն չեկավ: Նա փոխադրվել եր ողաչուական դպրոցի վերջին կուրսը և շատ ուրախ եր Յեկող տարի նա կլինի ողաչու, իսկական ողաչու. — լսուչիկ, Արշավիր հետ պինդ գրկախառնվեցին և համբուրվեցին: Չորս տարի չեր, վոր չեղին տեսել միմյանց: Արշավիր վերջին հիշողութիւնները Միհրանի մասին աչն ելին, թե ինչպիսի անսահ-

ման կարոտով նայում եր իր ընկերը յերկնքին և ցնորում եր ողաչու դառնալ: Իսկ ինքը, Արշավիրը չերագում եր դառնալ մեծ հեղափոխական գործիչ, գնալ Չինաստան կամ Գերմանիա, գործել այնտեղ, ապա մասնակցել ապստամբական շարժումներին, հեղափոխութիւն կատարել: Յերկու ընկերներից Միհրանն լնդհանրապես չար տղա չեր և ճարպիկ: Այնքան անհանդիստ եր, վոր վոչ վոք չեր կարող ասել. թե նրան տեսել ե կես ժամ մի տեղում հանգիստ նստած: Իսկ ինքը, Արշավիրը, ընկերոջ բոլորովին հակապատկերն եր ներկայացնում: Յերկար ժամերով նստում եր տանը, կարդում վորեւ քաղաքական գործիչի կենսագրութիւնը կամ բրոջուր, վորից հետո վեր եր կենում և գնում գեկուցում լսելու:

Այժմ նույնպես չերկու ընկերները միանգամայն տարբերվում ելին միմյանցից: Արշավիրն հակառակ, Միհրանը հաղթանդամ եր, ուժեղ և գեղեցիկ կազմվածքով: Նրա ողաչուական կաշվե զգեստներն ավելի ելին շեշտում նրա հաղթանդամութիւնն ու մարմնի գրավչութիւնը: Նա նույն անհանգիստ տղան եր, ուրախ և առաջին հայացքից կարծես լրջութիւնից միանգամայն զուրկ: Կարելի չեր լինթադրել, վոր միայն նա բավական եր՝ կենսուրախութեամբ վարակելու հոգեւորականների ու պետիստների մի ամբողջ առդիտորիա:

Նաչելով Արշավրին վոտից գլուխ, Միհրանը զարմացած բացականչեց, վոր նա շատ ե փոխվել. կուրծքն ավելի ներս ե ընկել, ուսերն ավելի չեն սեղմնել և առաջ չեկել, և վոր նրա ամբողջ մարմինը «բրակ» ե: «Դու մկաններ բուրդովին չունես»,—ասաց Միհրանը, տրորելով ընկերոջ թևը, վորից նա ցավ զգաց:—Մնացել ե կաշիդ ու վոսկորդ: Դու մի ըուպե ողում մնալ չես կարող: Շտապենք գնալ ամառանոց: Քեզ կազդուրվել ե պետք:—Իսկ քիչ հետո հարցրեց. —Դու ֆիզիկուլաուրալով զբաղվում ես:—Արշավիրը բացասական պատասխան տվեց, դա շատ զարմացրեց ու վշտացրեց Միհրանին:—Վոչինչ, սրանից հետո կպարապես: Յես ինքս եմ հանձն առնում»,—ասաց նա: Ընկերը ձայն չհանեց:

Արդեն մութն իջում եր: Արշավիրն ընկերոջն առաջարկեց զբոսանքի գնալ: Գնացին: Յեվ երբ շրջել ելին կես ժամի չափ, հանդիպեց Գոհարիկը: Նա բարևեց Արշավիրն և հետաքրքրությամբ սկսեց Միհրանին դիտել: Նա չեր ճանաչում նրան: Գոհարիկը միացավ և սկսեցին միասին քալել:

Միհրանը միքանի անգամ նաչեց Գոհարիկին: Ըստ չերեուկթին աղջիկը նրան դուր չեկավ: Նրա գննող հալացքը Գոհարիկի մեջ գտավ չերեկվա կաշվե պիջակավոր ու «զուտ հասարա-

կական» կոմյերիտուհուն, վորն աչտոր արդեն դարձել ե իսկական աղջիկ և ուզում ե ապրել իբրև աչդախին: «Միրուն կոմսոմոլկա», ասաց իր մտքում և ընկերոջ թևը սեղմեց. —Ծանոթացրու...

Արշավիր կրծքի տակով կասկածը սողաց և անցավ: «Ել չես ինչ ծանոթացնեմ, չերկուսդ ել կոմյերիտականներ եք, խոսեցեք միմյանց հետ»,—բարձրաձայն ասաց նա, ի պատասխան ընկերոջ շշուռի, Գոհարիկը ծիծաղեց «Ա՛, դու ուզում ես ինձ հետ ծանոթնալ,—խնդրեմ»: Ու ձեռքը մեկնեց:

Այդ ըուպելից ամբողջ չերեկոյան զբոսանքին տոն տվողը Միհրանն եր: Ուրախ զրուցում եր Գոհարիկի և Արշավիրի հետ, պատմելով Մոսկվայից, ողանավաին դպրոցից և ելի ուրիշ շատ բաներից: Գոհարիկին շատ եր հետաքրքրում աչդ նոր զրուցակիցը, վորովհետև նա հավիտենական «քաղաքականության ու անտեսության» փոխարեն թարմություն եր մտցնում ամեն ինչի մեջ: Մոսկվա, ողանավ, կոմսոմոլկաներ, սեր, համբույր, լոդ, զբոսանք... Նա հարցրեց Միհրանին. —Ի՞նչ ես զգում ողի մեջ չեղած ժամանակ:—Միհրանի աչքերը փալեցին:—Ո՛, ողում... Այդ ուրիշ բան ե: Վկնսնսն, պրոպելլերը: Ողանավը բարձրանում ե, Բռնել ես ղեկն ու ժպտում ես: Կար-

ված հետևում ես մեքենայի աշխատելուն: Վո-
չինչ չկա, ամեն ինչ կանոնավոր ե: Հանկարծ,
թռիչքի ժամանակ, «ողային փոս», — դատարկ
տարածություն: Գնդակի պես ներքև ե սլանում
ողանալով: Խորտակում: . Ձե: Մի-յերկու մետրից
հետո, վոնց վոր ընկնի փափուկ բարձի վրա:
Անող տարածութունն անցանք... Լավ ե ողում...

Միհրանի վոգևորութունը վարակել եր Գո-
հարիկին: Բորբոքված հաչացքով ու ծայրահեղ
լարված ուշադրությամբ նա լսում եր նրան, իսկ
յերբ նա լռեց, Գոհարիկը նայեց նրան ու ժպտաց:
Միհրանը նույնպես խորիմաստ ժպտաց և ընկ-
ճող հաչացքով նայեց աղջկան: Գոհարիկը գլուխը
կռացրեց: Արշավիբը նկատել եր, թե ինչպիսի
ուշադրությամբ եր լսում Գոհարիկն իր ընկերո-
ջը: Նկատել եր և տխրեց: Ե՛հ, գրո՞ղ: Ի՞նչ ար-
ժի: Որեկան քսանյերեք ժամ մտավոր աշխա-
տանք կատարիր, հյուժիր ամբողջ մարմինդ ու
առողջութունդ, բո բոլոր ուժերը նվիրիր գոր-
ծին և անաղին ոգուտներ տուր, — միևնույնն ե,
չես գնահատվի ճիշտ ե, քեզ հասարակութունը
կգնահատի, կուսակ,ութունը, խորհրդային մար-
մինները: Բայց ինչ վերաբերում ե անհատա-
կան կյանքին, այդտեղ արդեն, — ուրիշ բան: Վոչ
մի Գոհարիկ չի լել թքի քեզ վրա: Սակայն բա-
վական ե մի մկանոտ մարմին, մի ցուլի կազմ-

վածք, լրջութունից զուրկ մի շատախոս, և ա՛հ
նա պատրաստ ե նրա գիրկն ընկնելու...

Արշավիբն սթափվեց: Այդ կերպ մտածել իր
հարազատ ընկերոջ մասին: Այն ել առաջին հան-
դիպումից միջանի ժամ հետո... Ի՞նչ մեղք ունի
Միհրանը: Աղջիկներն են մեղավոր, վոր տղայի
մեջ այդքան սիրում են «բնության տվածը»,
թքելով «կուլտուրայի բերածի» վրա... Ինքն ե
մեղավոր, վոր բնությունից ստացել ե փշրանք-
ներ և այդ փշրանքներն ել սպառել ե: Ի՞նչ ու-
նի ինքն այժմ: Յերկար ժամերի աշխատանք,
կոմյեխտական, հասարակական աշխատանք, բայց
վոչ յերբեք անձնական տանելի կյանք:

Արշավիբը նորից սթափվեց: «Համաձայն
ես», հարցրեց Միհրանը: «Ինչի՞ն, յես չելի լսում»:
Գոհարիկը ծիծաղեց: «Միհրան, ընկերդ զբաղ-
ված եր կոոպերատիվի ստորին ցանցի սոցիա-
լական գունի ուսումնասիրությամբ», կատակի
ովեց նա, անգիտակցաբար խոցելով Արշավիբի
ամենացավոտ տեղը:

«Ինչի՞ն», կրկնեց Միհրանը: «Մենք համա-
ձայնության չեկանք, վոր ամառանոց գնանք չե-
րեքով: Համաձայն ես»: «Յես վոչինչ չունեմ
դեմ» — ասաց Արշավիբն ու լռեց: Սպա, պատ-
ճառաբանելով, վոր իրեն հոգնած ե զգում, գնաց:
Միհրանն ու Գոհարիկը միմյանի ել խոսեցին ամա-

Այն ամառանոցը, ուր նրանք գնացին չերեքով, գտնվում էր մի բարձրագիւր վայրում. անտառապատ էր և ջրերով հարուստ: Փոքրիկ գյուղաքաղաքի տներին մեկում մի սենյակ վարձեցին չերկու ընկերները, իսկ Գոհարիկը տեղավորվեց վոչ հեռու, իր ընկերուհիներից մեկի տանը:

Շրջապատն շտապեց իր բարերար ազդեցութիւնը ներգործել Արշափրի վրա և նրա տրամադրութիւնը բարձրացավ: «Դու, ընդհանրապէս, ի՞նչպէս ես հանգստանում ամառանոցում». հարցրեց Միհրանը: «Գնում եմ անտառ, պառկում եմ մեջքիս վրա և այդպէս մնում չերկար ժամանակ: Ապա սարն եմ բարձրանում: Յերբեմն ել լողանում եմ»: «Քիչ է», ատամնների արանքից արտնշաց ընկերը: Ուշ էր: Այդ ուրը բնեցին: Հետեյալ առավոտյան, շատ վաղ, Միհրանն ընկերովն արթնացրեց և առաջարկեց մի քիչ մարզանք կատարել: Արշափրին աչքերը կիսաբաց արեց և զարմացավ: «Այսքան շուտ վերկենալ: Այն ել մարզանքի համար: Արա քո մարզանքը, չես դեռ քնել եմ ուզում և մարզանքի հետ գլուխ չունեմ»: Միհրանն ուզեց զոռով վերկացնել, բայց ընկերով լուրջ ընդիմութիւնը հան-

դիպելով, տխուր դուրս չեկավ: «Կետ առաջին, հինգ րոպեի վաղը վաղ առավոտյան, մաքուր ողի մեջ», — մըթմըթաց նա ինքնիրեն ու սլացավ:

Հենց այդ որվանից ել Միհրանը ձեռնարկեց հասարակական աշխատանքի: Հավաքեց գյուղաքաղաքի կոմյերիտականներին ու մյուս չերիտասարդներին, նաև ամառանոցավորներին և կազմակերպեց սպորտ-խմբակներ. — ընդամենը չերեք խմբակ, վորոնցից մեկն՝ աղջիկներին:

Այդ նորութիւնը մեծ հետաքրքրութիւն առաջացրեց: Բոլորն շտապում էին անդամազրկել: Շատերն իրենց կյանքում մարզանք չեյին կատարել: Յեւ չերբ հետեյալ առավոտյան նրանք հավաքվեցին մարզանքի հագուստներով, ստեղծվեց մի ծիծաղաշարժ տեսարան: Լղար վոտքեր ու թևեր, արջի նման մագոտ, բոլորովին սպիտակ և թեթև հովից մըսող: Հատկապէս նրանցից մեկը, կմախքի նման լղար ու թուլակազմ մի չերիտասարդ, Սուրեն անունով, գրավեց Արշափրի ուշադրութիւնը. նա կանգնած էր շենքի մոտ և պասսիվ հետաքրքրութեամբ դիտում էր հավաքվածներին: Տեսնելով Սուրենին, Արշափրը բռնվեց անզուսպ ծիծաղով, ապա դառնալով նրան, ասաց. «Սիրելի ընկեր, չեթե ինձանից սպորտիստ դուրս գա, քեզանից ել դուրս կգա: Իգուր մի չարչարիր առանց այն ել չարչարված

մարմինդ»։ Ու նորից անգուսպ ծիծաղեց։ Մին-
րանը նայեց նրան։ «Վոչինչ, շուտով ամեն ինչ
լավ կդառնա», — ասաց նա և անցավ աշխատանքի։

Մի որ նա, դառնալով դեպի Արշավիրն, աս-
աց. «Լավ, ասենք՝ թե չես ուզում մարմնամար-
զությամբ զբաղվել. իսկ ի՞նչը կխանգարի, չեթե
ներկա գտնվես խմբակների պարապմունքների
ժամանակ»։ Արշավիրը չմերժեց։ Լավ, ինքը հա-
մաձայն է։ Անտառի ձանձրութից ու լեռների
միատեսակությունից հետո արժե մի մի անգամ
ներկա գտնվել այդ ֆորորդեան հետաքրքրությանը։

Առավոտյան ժամի յոթին սկսվեց պարապ-
մունքը։ Արշավիրը գեղամությամբ վեր չեւավ
անկողնից, հագնվեց ու դուրս չեւավ։ Պարապ-
մունքն սկսվել էր. — Մեկ, չերկու, չերեք, չորս, —
հրահանգում էր Մինրանը։ Ապա՝ — հինգ, վեց, յոթ,
ութ. Մարգիկները կատարում էին ազատ շար-
ժումներ։ Արշավիրը կանգնեց և սկսեց դիտել։
«Ի՞նչ կա հետաքրքիր։ Ի՞նչ են անում վոր... ի-
զուր և անտեղի զբաղմունք։ Ինձ թվում է, վոր
ֆիզկուլտուրայի մասին գոյություն ունեցող
կարծիքը չափազանցված է։ Մարդը, վոր բնա-
կանից ուժեղ և առողջ չլինի, ի՞նչ կարող է ա-
նել ֆիզկուլտուրան...»։ Արշավիրը ձանձրացավ և
ուզում էր հեռանալ, չերբ անսավ, վոր արդեն
սկսվում է աղջիկների պարապմունքը։ «Ահա, դա

հետաքրքիր է», — ասաց նա ու մնաց։ Բարձրու-
թյան թռիչք. այդ էր այդ որվա պարապմունքը։
Մինրանը կանգնեց փայտի մոտ. նրա ուշադիր
աչքերը հետևում էին վազող աղջկա շարժումնե-
րին և, չեթե կարիք լինում էր, նա արագությամբ
բռնում էր նրա թևից և ոգնում ցատկելու։ Սյա-
պես հերթով գալիս էին աղջիկները, վազում
միջանի քալ ու ցատկում։

Արշավիրը նախանձով նայեց Մինրանին։
«Յերջանիկ», մրմնջաց նա.

Հանկարծ նրա մտքերի թելը կտրվեց։ Այն
Գոհարիկը չի՞ վազողը։ Ահա ցատկեց. Գոհարի-
կը... Նախանձն ու խանդը միանգամից չեփ չե-
կան Արշավիրի կրծքի տակ։ Գոհարիկը մարզիկ...
ինչո՞ւ, վորովհետև Մինրանն է խմբակի ղեկա-
վարը։ Ահա, տես, նորից է ցատկում Ո՛ւհ, ինչ
սիրով բռնեց թևից... Ահա, տես, թե ինչպիսի են
ժպտում միմյանց...

Արշավիրը կծկվեց, նրա ուսերը կարծես ա-
վելի սեղմվեցին և իրար չեկան։ Նա իրեն վոչինչ
էր համարում այդ «թեթևսովիկ» Մինրանի հան-
դեպ և ինքն իր վոչնչությունից տանջվում էր
և ամաչում։ «Պիտի գա՞ մի որ, չերբ աղջիկնե-
րը տղաներին սիրեն վոչ թե ըստ իրենց ֆիզի-
կական հատկությունների, այլ ըստ մտավոր կա-
րողությունների։ Պիտի գա՞ մի որ, չերբ շրջա-

պատի մարդիկ, փոխանակ Միհրանին նայելու և հիանալու, նայեն իրեն: Փոխանակ ասելու «լավ մարմին ունի» ասեն՝ «մտավոր խոշոր կարողություններ ունի»: Դժվար թե այդպիսի որ գա: Իր վոչնչության գիտակցությամբ տարված, նա մոռանում էր, թե ինչքան հարգում ու սիրում էլին իրեն քաղաքի կոմյերիտականները և ինչքան մեծ հույսեր են դրել իր վրա կուսակցությունն ու կոմյերիտիութունը: Յերբ վերջիվերջո հիշեց այդ մասին, ատամների արանքից ջղախնացած մրմնջաց. «Վոչինչ պետք չե ինձ. յերանի թե յես Միհրանի տեղը լինելի: Յեթե աշխարհն ամբողջովին հենված է այդ հիմար սկզբունքի վրա, յես չեմ ուզում բացառություն կազմել: Չե՞ վոր յես ել եմ ուզում ունենալ անձնական կյանք, անձնական բախտավոր կյանք»:

7

Յերեկոյան դեմ Արշավիրը պառկած էր անկողնու վրա և մտածում էր: Յերբ դուռը բացվեց ու ներս մտավ Միհրանը, նրան թվաց, թե ներս մտնողն ընկերը չի, այլ թշնամի, վորի հանդեպ ինքը, դժբախտաբար, կարող է ունենալ միայն անհույս նախանձ ու խանդ: Ահուա մենաջնիվ նա վորոշեց խոսել նրա հետ և միջանք բաներ հարցնել: Սկսեց աջտեղից, վոր հար-

ցրեց, թե ինքը գոհ էր իր աշխատանքից: Միհրանը գոհ էր: «Իհարկե, անհնար է գոհ չլինել,—ասաց նա, դսպելով իր դառնությունը.—աղջիկներ, մերկ թևեր ու սրունքներ, կուրծք»... Միհրանը զարմացած նայեց ընկերոջը: Ի՞նչպես թե: Ախր նա սխալվում է: Իր գոհունակության զգացմունքը բղխում է վոչ թե մերկ թևերից ու վոտներից, այլ այդ թևերի ու վոտների մարզվելուց: Տղա թե աղջիկ, գեղեցիկ թե տգեղ, միևնույնն են իր համար: Պարագմունքի ժամանակ նրանք մի-մի հավասար միավորներ են և ուրիշ վոչինչ: Այդպես պետք է մտածի յուրաքանչյուր իսկական մարդիկ և յուրաքանչյուր մարդ, վոր ունի առողջ բանականություն և զգացմունքներ:

Արշավիրը վաղուց ի վեր ճանաչում էր Միհրանին՝ նրան չհավատալու համար: Ընկերոջ խոսքերի յուրահատուկ անկեղծ շեշտը համոզեց նրան և նա զգաց, վոր Միհրանն ասում է ճշմարտությունը: «Այդ լավ է,—մտածեց նա,—ուրեմն վրտանդ չի սպառնում Գոհարիկին: Կարելի չե վաղն ևեթ բացատրվել նրա հետ»: «Իսկ յես,—մտածեց նա քիչ հետո,—Միհրանի փոխարեն՝ մեծ գոհունակություն կզգալի վոչ թե ինչ-վոր աշխատանքից, այլ այդ կանացի մարմինների հաճելի հպումից...»: Այդ մասին հարցրեց Միհրանին.

«Դու հաճուք չես զգում»... «Գիտե՞ս ինչ, — պատասխանեց Միհրանը, — բայց չվերափորվես իմ խոսքերից. ինձ թվում է, վոր լավ են ասել՝ առողջ հոգին առողջ մարմնի մեջ: Յեթե դու Ֆիզիկապես ավելի առողջ լինելիք, այդ բոլոր հիվանդոտ ցանկությունները դուրս կգալին գլխիցդ: Միթե չկան այնպիսիները, վորոնք Ֆիզիկապես վատառողջ ու թույլ են, բայց այդ բանը չի անդրադառնում նրանց հոգեբանության վրա: Իսկ գո՛ւ, իմ կարծիքով, ամեն քաղաքիս ինչ և ամեն գործի ժամպահ կանացի մարմին տեսնելն ու հրապուրվելը հիվանդոտ ցանկություն է»:

Արշավիրը չպատասխանեց, բայց և չվերափորվեց ընկերոջից: Այն գաղափարը, վոր Գոհարիկը կարող է իրենը լինել, լցրել էր նրա ամբողջ հոգին ուրախությամբ ու լավատեսությամբ:

8

Առավոտյան, չերբ Արշավիրն արթնացավ, Միհրանն արդեն դուրս էր գնացել: Նա, հակառակ սովորականի, անմիջապես հագնվեց և պատրաստվեց դուրս գնալու: Կգնա, կբացատրվի: Նա բոլորովին չեր տատանվում: Նա չեր չերկչոտում, ինչպես շատերը: Միայն մի բան էր նրան հուզում. այն գաղափարը, թե ինչպես քիչ հետո, անտառի խորքում, թավ խոտի վրա և ծառերի

ստվերների տակ, պիտի գրկի Գոհարիկին և պիտի համբուրի...

Դուրս գնալուց առաջ, նա նայեց լուսամուտից: Արդյոք այնտեղ չի Միհրանը: Յեթե այնտեղ է, պետք է մի քիչ ել սպասել, ապա դուրս գնալ, Գոհարիկին մենակ հանդիպելու համար: Միհրանն այնտեղ չեր և վոչ էլ չերիտասարդեներ: Պարապմունքը վերջացել էր և Միհրանը, չերի ընկերոջը չերկար սպասելուց հետո, գնացել էր: Արշավիրը դուրս չեկավ և քայլերն ուղղեց դեպի Գոհարիկի ապրած տունը Դուրս չեկավ նրա ընկերուհու մայրը, վորին և Արշավիրը հարցրեց: «Մի ժամ առաջ ընկերոջդ հետ գնացին», պատասխանեց կինը: Ի՞նչ... Ո՞ւմ հետ... Միհրանի... Ամեն ինչ միանգամից շուռ չեկավ: Ուզեց հարցնել, թե ուր գնացին նրանք, բայց կինն արդեն հեռացել էր: Գոհարիկն ու Միհրանը... միասին... Արշավիրը շրջվեց և քայլերն ուղղեց դեպի անտառ: «Յեթե նրանց հանդիպումն ուրիշ ընույթ ունի, նրանք անպայման անտառում կլինեն»: Արագ գնում էր նա, ամբողջ մարմնով որորվելով: Շտապ քայլելուց նրա շունչը կտրվեց: Նա հեռում էր և վտոքերի մեջ արդեն հոգնության ցավ էր զգում: Սլոպես գնաց բավական տեղ, ապա կանգնեց. «Ո՛ւր գնալ, դեպի վեր ուղղությամբ: Ո՞վ գիտե, ուր են հիմի»... Ապա

մտածկոտ, կռացրեց գլուխն ու դանդաղ շարունակեց ճանապարհը: Ինչքան փողորմելի չե լինքը: Այնքան անգոր, փոր, թեև գիտե Միհրանի ու Գոհարիկի միասին լինելը, բայց անկարող է գլուխն նրանց և թքել իր վառ ընկերոջ չեքեսին: Ո՛հ, նա: Ո՛վ գիտե, հիմա փոր ծառի տակ թեք է ընկել, գրկել է Գոհարիկին և ծծում է նրա թարմ շրթունքները...

Հասնելով անտառ, Արշավիրը դեռ բավական տեղ քայլեց և ապա հոգնած նստեց մի ծառի տակ: Ո՛ւր են նրանք: Իսկ իրեն ինչ, թե ուր են: Ի՞նչ պիտի անի ինքը: Բացարձակապես փոշինչ... Հիմի Գոհարիկը նայում է Միհրանի աչքերի մեջ և ծիծաղում է: Բայց չէ՞ փոր նույն կերպ նա կարող եր իր աչքերի մեջ նայել ու ծիծաղել: Հիմի Միհրանը գրկել է նրան ու սեղմում է իր կրծքին: Բայ չէ՞ փոր ինքը նույնպես... Այստեղ կանգ առավ Արշավիրը: Վոչ... Իհարկե, Միհրանն ավելի ուժեղ կսեղմի նրան իր կրծքին և ավելի կցավեցնի: Նա ուժեղ է: Իսկ աղջիկներին համար այդ է հարկավոր) — կոպիտ ֆիզիկական ուժը...

Սեփական փոշնչության և անձնական ապերժանկության դադափարը կրծում եր Արշավիրին և նա պատրաստ եր հեկեկալու, չեթե գիտենար, փոր դրանով կարող է հանդատանալ:

Բայց նա իրենից հեռու վանեց այդ միտքը և ուրիշ բանով զբաղվելու համար սկսեց դիտել շուրջը և ահանջ դնել:

Հանկարծ նրան այնպես թվաց, թե հեռվից ինչփոր ծիծաղի ձայն լսվեց: Այստեղ տարօրինակ փոշինչ չկար: Կարող եր և իրոք ծիծաղի ձայն լինել: Բայց Արշավիրին թվաց, թե այդ ծիծաղը Գոհարիկինն եր և փոշ մեկ ուրիշինը: Նա վեր ցատկեց տեղից և գնաց ձայնի ուղղությամբ: Ճանապարհը տանում եր դեպի անտառի խորքը, ուր ծառերն այնքան խիտ էին և սաղարթներով միմյանց փաթաթված, փոր թողնում էին սլունազարդ լաբիրինթոս — քարանձավի արպավորութուն: Արևի շողերն այդտեղ չեղին ընկնում և կանաչը գետնի վրա սակավ եր ու նրվազ: Բավական տեղ քայլելուց հետո նա անսպասելիորեն դուրս չեկավ մի փոքրիկ, արևոտ բացատ: Իրար գրկախառնված չեղու մարմիններ շտապ բաժանվեցին և Արշավիրը տեսավ Միհրանին ու Գոհարիկին: Իբրև թե չնկատելով նրանց, Արշավիրն ուղում եր անցնել, բայց ընկերը կանչեց նրան: «Վոչ, — ասաց Արշավիրը սառը և չոր տոնով, — չես ուրիշ տեղ եմ գնում, շարունակեցեք»: Յեվ անցավ: Նրա սրտում այնքան թույն ու բարկութուն եր հավաքվել, փոր չկարողացավ իրեն զսպել, և ատամների արանքից մոմաց Գոհարիկի հասցեյին. «Պոռնիկ»...

Սկսվեց մի սպասելի բան, — սառնութիւն ընկերների միջև: Կամ ավելի ճիշտ կլինի ասել՝ Արշավիրի սառնութիւնը Միհրանի հանդեպ: Յերեկոյան դեմ, յերբ Միհրանը ներս մտավ սենյակ և ընկերոջը բարեկեց, նա նույնիսկ չնայեց ել նրա կողմը: «Յես չեցի կարծում, վոր Մոսկվան կարող եր քեզ այդքան փչացնել, ամոթ քեզ».— ասաց նա քիչ հետո: Միհրանը դարձացած նայեց ընկերոջը, ապա սկսեց խոսել. «Արշավիր, ի՞նչ ե պատահել քեզ...» Բայց դեռ խոսքը չավարտած, ընկերն ընդհատեց նրան: «Յես հո աղջիկներին ձեռիցդ չեցի առնի, վոր անցյալ ուրը սուտ ելիր խոսում, բարբառելով ինչվոր ընկերական վերաբերմունքի, առողջ հոգու և մարմնի մասին»: «Ախր դու սխալվում ես, Արշավիր», սկսեց Միհրանը: «Ի՞նչ, սխալվում եմ, չես աչքովս տեսա քեզ ու նրան»... «Իսկ ի՞նչ, չես իրավունք չունեմ սիրելու», հարցրեց Միհրանը: «Սիրելով»... Արշավիրը լռեց: Նա սիրում ե: Ուրեմն, ճիշտ ե: Միհրանն անցյալ ուրը սուտ չեր ասում: Նա սրիկա չի: Նա սիրում ե. իսկ սա արդեն հանցանք չե... Սակայն, ինչո՞ւ պատահականութեան բերմունքով նա սիրում ե Գոհարիկին և վոչ թե մեկ ուրիշին: «Իսկ ինչո՞ւ

հատկապես նրան», հարցրեց նա բարձրաձայն, բայց կերկերացող տոնով: Միհրանը մի րոպե լուռ մտածեց, ապա հանկարծ վեր ցատկեց իր տեղից և մոտեցավ նրան. «Արշավիր, դու չե՞ս ես նրան սիրում»... Ընկերը ձայն չհանեց. նրա շրթունքները դողում ելին. նա հանկարծ շրջվեց և ջղածգորեն ինչվոր բան մոմոաց:

Նրա նեղլիկ ուսերն անհույս ցնցվում ելին: «Արշավիր, ամոթ ե, դու բոլորովին նման չես կոմյերիտականի, — ասաց Միհրանը հանդիմանական տոնով. — արժե՞ մի աղջկա համար»... Բայց նրա խոսքը կիսատ մնաց: Արշավիրը նայեց ընկերոջը: «Վոչ, Միհրան, դու սրիկա պիտի լինես, չեթե այդ կարծիքն ունենաս իմ մասին: Վոչ: Յես աղջկա համար չե, վոր տանջվում եմ: Յես տանջվում եմ իմ անձնական զգեսխտութեան և վոչնչութեան գաղափարից: Այդ ե պատճառը... Այո, չես տանջվում ե նաև Գոհարիկի համար, վորովհետեւ նա միակ աղջիկն եր, վոր կարող եր ինձ սիրել, չեթե դու չլինեցիր: Դու հասկանում ես՝ ինչ ե նշանակում միակը»...

Միհրանը մտածում եր: «Յերանի շուտ ասած լինելիք ինձ», մրմնջաց նա, ապա նստեց ընկերոջ կողքին. «Լսիր, Արշավիր, չես նրան սիրում եմ, նա չեւ ինձ ե սիրում: Դու նրան մոռանալ չե՞ս կարող»: Արշավիրը դառն ժպտաց.—

«Մոռանալ... Նա աշխարհի ամենալավ աղջիկներէց մեկն էր և միակը, վորն ինձ կարող էր սիրել»... Միհրանն ուրիշ բան չհարցրեց: Նա լուռ նստել էր և մտածում էր, կարծես ինքն իր մեջ կռվելով: Ապա, արագ վերկացավ, «լա՛վ» ասաց և սենյակից դուրս յեկավ: Արշավիրը դեռ մտածում էր:

Միհրանը քաջերն ուղղեց դեպի Գոհարիկի բնակարանը: Հասնելով աջտեղ, նա դուռը թակեց: Դուռս յեկավ ինքը, Գոհարիկը, վորը տեսնելով դիմացինի տխուր դեմքը, մոտեցավ և կատակի տվեց. — «Դո՛ւ յես, թե՛ Արշավիրը»: Միհրանը կատակին չսպասասխանեց և սպա առաջարկեց նրան դուրս գալ իր հետ զբոսանքի. «Ասելիք ունեմ», ավելացրեց նա: Միհրանի լուրջ դեմքն ու նրա շաապ աչցելութունը հետաքրքրեցին Գոհարիկին: Նա թեանցուկ արավ տղային և ասաց. — «Գնանք»: Նրանք բռնեցին անտառի ճանապարհը, ապա հասնելով իրենց սովորական տեղը, նստեցին: «Դ՛հ ասա», շտապեցրեց Գոհարիկը: Միհրանը չսպասեցրեց. նա բռնեց աղջկա ձեռքը և սկսեց. «Դու գիտես, վոր յես քեզ սիրում եմ: Այդ ճիշտ է: Բայց մենք պետք է բաժանվենք: Յես այնպես եմ մտածում, վոր մի ամսից հետո, չերբ յես Մոսկվա վերադառնամ, քեզ համար շատ վատ կլինի:

Մի տարի Մոսկվայում եմ մնալու. — դեռ պիտի սովորեմ: Իսկ զբանից հետո, ո՞վ գիտե, յես նորից կհիշե՞մ քեզ կամ դու՝ ինձ: Գուցե մենք տարբեր մարդկանց հանդիպենք, մեր զգացմունքները փոխվեն միմյանց հանդեպ... Այս բոլորն ասում եմ, վորպեսզի դու քեզ հետ խաբված չգդաս»: Գոհարիկը մի վճռական շարժում արեց. «Վո՛չ, դու ինձ չես խաբում. դու ինձ սիրում ես, յես այդ տեսնում եմ: Իսկ ի՜նչ քամի փչեց զլիսի՜ք՝ ինձ այսպիսի բաներ ասել: Ինձ չի հետաքրքրում այն, թե մի տարի մեզնից վոր մեկն ուր կլինի կամ ում հետ: Յես իմ աշխատանքով եմ սպրում և վոչվոքից տնտեսական կախում չունեմ: Կսիրեմ՝ ում վոր ուզենամ»: «Բայց, Գոհարիկ, դու, ճիշտ է, վոչվոքից տնտեսական կախում չունես, իսկ հասարակութունը, շրջապատը: Դու բարոյական կախում ունես նրանցից»... Գոհարիկը ծիծաղեց: «Վո՛ր հասարակութունը. նա միատարր չի: Յեթե հինը՝ թքել եմ նրա վրա: Յեթե մերոնք՝ մերոնք արդեն այլ կերպ են մտածում և ինձ չեն մեղադրի»: Միհրանն, ըստ յերևույթին, վոչինչ չեր կարող առարկել: Նա միայն այնքանն ասաց, վոր ինքն այստեղ մնալու չե միտին մի ամիս. «Վոչինչ, մենք մի ամիս կսիրենք միմյանց»... — ասաց Գոհարիկը: Այս խոսքերից հետո Միհրանն անշափ

ցանկութիւնն զգաց զըկելու նրան և համբուրելու, բայց զսպեց իրեն: Նա հիշեց իր ընկերոջը: «Գոհարիկ, գիտե՞ս, թե ինչի՞ համար յես այդ բոլորն ասացի քեզ: Վորովհետեւ Արշավիրը նույնպէս սիրում է քեզ: Յես կարող եմ իմ ամենասիրած աղջկան շուտով մոռանալ և սիրել մի ուրիշին, վորովհետեւ աշխարհում լավ աղջիկներ չեն պակսի, բայց նրա, Արշավրի համար, դու աշխարհի ամենալավ աղջիկն ես ու միակը, վոր»... Գոհարիկն ընդհատեց նրան... «Միհրան, նա իմ ընկերն է, յես նրան հարգել և հարգում եմ, բայց¹¹ սիրել՝ բոլորովին»: Գոհարիկն աֆափան համոզված ասաց այդ, վոր Միհրանն այլեւ աննպատակ գտավ առարկելը Անուամենայնիվ դարձյալ փորձեց. «Նա քեզ հետ կամուսնանա, իսկ յես»... Գոհարիկը նորից ընդհատեց նրան: «Յես, ասաց նա, նախընտրում եմ քեզ հետ լինել մի ուր, քան թե նրա հետ մի տարի: Այստեղ հարգանքի կամ ընկերսիրութիւն խնդիր չկա: Սերն է վորոշողը»: Յե՛վ ապա, միանգամից կտրելով խոսակցութիւնը, մոտեցավ Միհրանին. «Համբուրիր: Միհրանին ուրիշ վոչինչ չե՛ր մնում անել...

10

Ընկերների փոխհարաբերութիւնը վերջնական-

նապէս խզվեց: Թեև նրանք դարձյալ նույն սենյակումն էլին ապրում, բայց համարյա թե բոլորովին չէլին խոսում միմյանց հետ: Իսկ միասին զբոսանքի գնալ՝ չերեք չե՛ր պատահում: Այս բոլորի մեջ, իհարկե, ամենաշատ մեղավորն Արշավիրն էր: Նա յեր, վոր անպատասխան եր թողնում ընկերոջ հարցերն ու հեռանում եր: Նա յեր, վոր խուսափում եր ընկերոջ հետ խոսելուց: Իսկ խոսելու և հաշտվելու ցանկութիւնն՝ Միհրանի կողմից միշտ ել կար, չնայած իր ընկերոջ համառութիւնը:

Մի ուր Միհրանը վորոշեց վերջնականապէս ամեն ինչ պարզել ընկերոջ հետ: Նա չե՛ր կարողանում տանել այդ կացութիւնը, չերբ յերկու ընկերներ խռովածների նման են ապրում միմյանց հետ: Բացի դրանից, Միհրանին տանջում եր մի այլ հանգամանք: Նա տեսնում եր, թի ինչպէս իր աչքի առաջ ավելի և ավելի չէ հլուծվում իր ընկերը: Ինչպէս նա ժամերով առանձնանում է անտառում և իրեն հանձնում է տխուր մտածմունքների: Միհրանն իրեն նույնիսկ թույլ եր տալիս մտածել, վոր ընկերը յերբեմն լալիս է ջղայնանալուց կամ վշտից: Յե՛վ այս բոլորն ինկատի ունենալով, նա վորոշել եր անպայման խոսել ընկերոջ հետ:

Պատահեց այսպէս:—Արշավիրը մահճակալի

վրա լուռ պառկած եր: Միհրանը նույնպես:
«Արշավիր, ասաց նա, դու կոմսոմոլիստ ես և
խելոք տղա. արժե՞ այսպես շարունակել»: Ընկե-
րը ձայն չհանեց: «Դու չեկել ես ամառանոց,
թե՞ տանջարան: Փոխանակ կազդուրվելու և քեզ
ուրախ զգալու, ավելի չես հյուժվում ու
տանջվում»:

Արշավրի դեմքի վրա խաղաց հեգնական
ժպիտը, բայց այս անգամ ընկերոջ դեմ: «Ու-
սում ես փրկաստիպի նման, իսկ չես կարծում
էլի, թե դուք միայն ուժի մարդ ես, — լլուռ չի:
Ասա խնդրեմ, քո մասին դու այդպես կմտածե-
լիր: Յեթե իմ տեղը դու լինելիր, իհարկե, դու
այդպես չեյիր մտածի: Բայց դու միշտ հաղթո-
ղի դերուժն ես, իսկ չե՞ս: Դու գեղեցիկ ես, և»...

Այս անգամ ևս, չնայած ընկերոջ հեգնական,
տոնին, Միհրանը չվերափորվեց: «Արշավիր, — ասաց
նա նախկին մտերիմ տոնով, — իմ կարծիքով,
գեղեցկություն ու տգեղություն խնդիրը պետք է
փորոշել այսպես: Առողջությունը՝ դա չե գեղեց-
կության նախապայմանը: Ծիշտ ե, առաջիմ դժվար
է պատասխանել այն հարցին, թե ինչ պետք է
լինեն, ինչ պետք է անեն խեղանդամներն ու
այլանդակները: Դրա պատասխանն ապագայի
հարց է: Իսկ դու չե՞ վոր վոչ խեղանդամ ես,
վոչ ալանդակ: Դու պարզապես հիվանդոտ ես,

իսկ դա կարելի չե բուժել գեղերից առավել՝
Ֆիզկուլտուրայով»: Արշավիրը նորից չհամոզվեց,
բայց, մյուս կողմից, նա պատասխան չգտավ
ընկերոջ ասածին՝ առողջության և գեղեցկու-
թյան մասին: Նա միայն պատասխանեց այն,
վոր Ֆիզկուլտուրան, առհասարակ, հրաշքներ չի
ստեղծ և նրա հետ մեծ հույսեր չպետք է կա-
պել: Բացի դրանից, ֆիզկուլտուրան ել նույն-
պիսի պրոֆեսիա չե, ինչպես, որինակ՝ բանջա-
րաբուծությունը: Ամեն մարդ ֆիզկուլտուրայով
չպետք է զբաղվի: «Վոչ, պատասխանեց Միհրա-
նը, ֆիզկուլտուրան մասնագիտություն չե, այլ
յուրաքանչյուր մարդու համար անհրաժեշտ մի
գիտելիք: Շուտով նա կմանի մեր կենցաղի մեջ
և կդառնա նրա որդանական մի մասը»:

Յերկու ընկերներն ել լռեցին: Ըստ չերե-
վույթին, Արշավիրը բոլորովին չե՛ր համոզվում,
կամ համոզվում եր չափազանց քիչ: Վորոշ ժա-
մանակ լուռ մնալուց հետո նա նորից խոսեց.
«Ե՛հ, ինչի՞ մասին ենք խոսում: Իզուր խոսակ-
ցություններով մենք չենք կարող իրերի ընթաց-
քը փոխել»: Ապա նեղսրտությունը ավելացրեց.
«Վայելիր Գոհարիկիդ. ել ինչո՞ւ չես ուզում ար-
դարանալ ինձ մոտ»: Այս անգամ Միհրանը մի-
այն հանդիմանություն միայն չեց ընկերոջը և դուրս
չեկավ սենյակից:

Ամիսը մոտենում էր իր վախճանին: Ընկեր-
ներն արդեն մտածում էին վերադառնալու մա-
սին: Միհրանը, վոր նորից վերադառնալու չեր
Մոսկվա, մտածում էր մի քիչ ավելի շուտ վե-
րադառնալ, վորպեսզի ժամանակ ունենա միջա-
նի որ քաղաքում անցկացնելու: Իր աշխատանքի
արդյունքներն ստուգելու համար, նաև սպորտ-
խմբակների աշխատանքները ցուցադրելու համար,
նա վորոշել էր կազմակերպել մարզահանդես:
Կոմիտեի տականքները, Միհրանի խմբակի անդամ-
ները, բոլորը յեռուզեռի մեջ էին: Մարզահան-
դեսը պետք է տեղի ունենար կիրակի ուրը: Այդ
որն ուրբաթ էր, հետեաբար և՛ կիրակին մոտ:

Միայն Արշավիրն էր, վոր անտարբեր էր
դեպի այդ անցուդարձը, փնտռում էր ձանձ-
րուլթից դուրս գալու միջոցներ և չնայած դրան,
ժամերով առանձնանում էր և մտածում նրան
վոր մի բան չեր հետաքրքրում: Նույնիսկ կիրա-
կի ուրը, չերբ բոլորն շտապում էին հրապարակ,
մարզահանդիսին ներկա լինելու, նա ալամալից
իր քայլերն ուղղեց դեպի այն կողմ: Յեվ այդ
եղ հատկապես նրա համար, վոր նորից տեսնե-
լու չեր Գոհարիկին, վորին և՛ ուզում էր տես-
նել, և՛ չտեսնել:

Մարզահանդեսն սկսվել էր: Արշավիրը,

տեսնելով մարզիկներին, զգաց մի չար նախանձ:
Նա մտածում էր, վոր դրանք բոլորը վաղը-
մյուս ուրը պետք է դուրս գան մի-մի Միհրան,
իսկ ինքը... Լցված չար նախանձով և հեգնելու
ցանկությամբ, նա առաջ անցավ դեպի նրանց
շարքերը, գտնելու և ծաղրելու համար այն մի՝
Նիհար, թուլակազմ չերիտասարդին, Սուրեն
անունով, վորին նա մի անգամ եղ էր տեսել և
մի անգամ եղ ծաղրել: Մերկ մարմինների տեսքն
ու քրանահոտը զգվանք պատճառեցին Արշավիրին,
և նա իրեն զգաց ձիերի ջոկատում: Բայց նա
շարունակեց իր ճանապարհը: Նա փնտռում էր
իր հին ծանոթին:

Վարձան ավելի չեղ՝ առաջանում նա, այն-
քան շատ աճում էր նրա մեջ մեկին խոցելու,
վիրավորելու ցանկությունը: Չէ՞ վոր այս բոլոր
մերկ մարմինները վիրավորում են իրեն, ծաղ-
րում են իրեն, իր ներկայությունը, իր գոյու-
թյունը... Նիհար չերիտասարդը չկար: Արշավիրը
նրա նման մեկին տեսավ, բայց դա նա չեր:
Սուրենը չկար: Բայց լինչպես, չէ՞ վոր նա, ըստ
Միհրանի պատմածների, ամենականոնավոր կեր-
պով հաճախողներից մեկն էր: Արշավիրը կանգ-
նեց և անփուլթ սկսեց մտածել: Հանկարծ մի
միտք կալծակի նման անցավ նրա գլխով, նա
արագ շուռ չեկավ, հասավ Սուրենի նման տղայի

մոտ, բռնեց նրա ձեռքից և շարքերից դուրս բերեց։ Ապա բռնելով նրա մյուս ձեռքն ել, վոտից մինչև գլուխ չափեց նրան և ապա զարմացած բացականչեց.

— Սուրեն... —

Սուրենը զարմացավ այդ անծանոթ չերի-տասարդի արածից։

— Քո անունը Սուրեն ե...

— Այո։

— Ուրեմն դ՞ու յես նա։

— Ո՞վ։

— Դու գէտ հիշում ինձ։ Յես քեզ ծագրել եմ այն ժամանակ, չերբ դու դեռ նոր ելիր մտնում խմբակը։ Դու այն ժամանակ ինչքան նիհար ելիր, թուլակազմ, հիվանդոտ։ Այդ ինչպես պատահեց հրաշքը։

Սուրենը միամիտ ժպտում եր։

— Ուրեմն հնարավոր ե այսպիսի բան, հա։ Հնարավոր ե այսպիսի հրաշք։ Արշավրի անկրակ աչքերում փայլեցին հույսի շողեր։ Նա նորից բռնեց Սուրենի չերկու ձեռներից, և մի անգամ ել հիացմունքով նայեց նրան՝ վոտից գլուխ։ Ապա հանկարծ թողեց նրան և վազ տվեց Միհրանի մոտ։

— Սիրելի Միհրան, չեկ հաշտվենք։ Յես

քեզ ներում եմ ինձ պատճառած վշտերի համար. դու չեկ ինձ ներիր։

Միհրանը չեր հասկանում, թե ինչու՞մն ե բանը։ Նա թեև գիտեր իր ընկերոջ բնավորության այդ տարրիկնակ գծերը, այնուամենայնիվ, զարմացավ նրա ընթացքի վրա։

Թողնելով Միհրանին, Արշավիրը դուրս չեկավ հրապարակից և քաջերն ուղղեց դեպի անտառ։ Արագ-արագ քալելով բավական տեղ, նա հոգնած նստեց մի ծառի տակ։

Այժմ կարելի չե հանգիստ մտածել։

Ուրեմն, այդպես։ Մարմնամարզութունը, ֆիզիկական կրթութունը զուտ մասնագետների համար չե։ Նրանով պետք ե զբաղվի յուրաքանչյուր մարդ։ Ճիշտ ե։

Ճիշտ եր ասում Միհրանը։

Ուրեմն, հրաշք կարժվածը, իրոք, կատարվում ե։ Թույլը ուժեղ ե դառնում, ախուրն՝ ուրախ, հոգետեսը՝ լավատես։ Ճիշտ ե։

Ճիշտ եր ասում Միհրանը։

Կսկծի նման մի բան այրեց Արշավրի սիրտը։ Ինչո՞ւ համար իզուր կորցրի իմ լավ տարիները, առանց նրանց վայելելու։ Հիմի ուշ չե... Մի բոպե նրան թվաց, թե այլևս ամեն ինչ կորած ե, բաց հիշեց իր տարիքն ու ժպտաց։

Վոչ, գեռես հուշա կա. ամեն ինչ գեռես
կորած չես:

Նրա աչքերի առջևով անցան մարմիններ,
ողի միջից թռչող, ցատկող մարմիններ, նետավող
նիզակներ, գնդեր, սկավառակներ, բարձր թռչող
ֆուգբոլի խաղադնդակ և ուրիշ շատ բաներ:
Ահա թե ինչ...

Սուրենը... Այդ աչն Սուրենը չէր. — հիվան-
դոտ, թուլակազմ, վորին ինքը ծաղրեց: Ինչքան
ե առողջացել. ինչքան ե գեղեցկացել... Արշավ-
րի մտքերի ընթացքը հանկարծակի կանգ ա-
ռավ: Գեղեցկացել... Առողջացել ե և գեղեցկա-
ցել: Իսկ ինչո՞ւ չե գեղեցկացել... Դա աչն վող-
բալի տեսք ունեցող Սուրենը չէր...

Արշավրի ականջին հնչեցին ընկերոջ խոս-
քերը: Առողջութունը գեղեցկության նախա-
պայմանն ե...

12

Յերբ նույն ուրը լերեկոյան, անտառում
գլխանելով, Արշավիրն ընկերոջը պատմեց իր
ամբողջ զգացածը, նա չափազանց ուրախացավ
և ուրախությունից գրկեց ընկերոջը:

— Ուրեմն հիմա ուզում ես մարմնի կուլ-
տուրայով զբաղվել:

Արշավիրը ժպտաց:

— Բայց դու գնում ես շուտով:

— Վոչինչ: Յես քեզ կսովորեցնեմ, վորից
հետո դու ինքդ, առանց ուրիշի ոգնության
կամ ցուցմունքների, կկարողանաս շարունակել:

— Լավ:

— Վաղը կգամ պարապմունքի:

Արշավիրը մտածկոտ կռացրեց գլուխը.

— Վոչ...

— Ինչո՞ւ:

— Ամաչում եմ...

Միհրանը բարձր ծիծաղեց:

— Լավ, աչն ժամանակ չես քեզ հետ ա-
ռանձին պարապմունքներ կունենամ: Համաձայն
ես: Մինչև վոր կկարողանաս մի քիչ համարձա-
կություն ձեռք բերել:

— Այո, այդպես կլինի:

Քաղաք վերադառնալուց լերեք ու հետո
Միհրանը գնաց:

Արշավիրը կանոնավոր կերպով կատարում
եր նրա առաժնեքերը:

Յերբ նրա մարմնի միջով կենսատու մի
հոսանքի նման անցնում եր բերկրությունը, նա
ուրախ ժպտում եր: Նա նայում եր իր թույլ
թևերին և մարմնակազմին, վորն սկսել եր պրո-
գրանալ, կայունանալ և լցվել մկաններով: Թեև

այդ բոլորը դեռ հազիվ նշմարելի չեր, բայց Արշավիրն զգում էր այդ ամենը և հրճվում: Իր ընկերոջ ասածները միա և արշուն էլին առնում: Պարզորոշ կերպով նա զգում էր, վեր ինքն որըստորե առողջանում է և կազդուրվում:

Ֆիզիկոսության գրավել ու կլանել էր Արշավիրի ուշադրության մի խոշոր մասը: Նա տեսնում էր, վոր քաղաքականությունից, տնտեսագիտությունից և սիրահարությունից դատ, ուրիշ շատ հետաքրքիր բաներ կան աշխարհի վրա:

Բոլորում էր իր քսաներկուցերորդ գարունը: Նա մինչև այժմ անխնամ էր թողել իր մարմինը և միայն այս տարի չեր լսում նրա ձայնը:

Նրա մարմնի վերածնման հետ միասին ինչ-վոր փոփոխություններ էլին կատարվում նաեւ նրա հոգու մեջ: Թեև առայժմ փոքր փոփոխություններ, բայց այնուամենայնիվ պարզ էր, վոր սիրո պրոբլեմը դադարում էր նրա համար գրամատիկական առեղծված լինելուց:

Նա զգում էր, թե ինչպես իր մեջ առաջանում և ծնունդ են առնում նոր զգացմունքներ, նոր ցանկություններ. — ավելի լավ և առողջ: Նա զգում էր, թե ինչպես փոխվում է ինքը՝ վոչ միայն ֆիզիկապես, այլև հոգեպես...

Այո, առողջ հոգին առողջ մարմնի մեջ:

«ԶԵՄԼԱՍԵՐԸ»

Մաշված, քրտնակալած կարտուզավոր գլխարկը գլխին, գլուղի փողոցներով մաներ գալիս նախկին հողաչափ, «գեմլամեր» Գասպարը:

Ման էր գալիս և ախ քաշելով նայում էր դաշտերին.

— Չե, ախպեր, լավ չեն չափում հողերը: Իսկի գեմլամեր խո չկան քամբախտ աշխարհը...

Յեվ ելի նայում էր դաշտերին, դաշտերի միջից անցնող ջրանցքին ու ելի մրթմրթում էր բլթի տակ:

— Բա ջրանցքը... Իսկի եդ տեսակ ջրանցք անցկացնել կլինի... Վոնց վոր զոռով բերես, եդ տնաքանդների արտերի կողքով անցկացնես: Խեղճ տերտերի ու քլուվի արտերն ենտեղ պապակում են, իսկի վրեն աչք դարձնող չկա: Խի՞ պիտի աչք դարձնեն. ենա իրանց արտերը ջրանցքի լավ տեղն են գցել ու ամեն ոք ջուր են տալիս...

Գլուղամիջով գնում էր հին հողաչափ, — «գեմլամեր» Գասպարը, ու մեկ էլ տեսավ, վոր

դիմացի կալի մեջ նստել ե Պետրոս բիձեն չի-
բուխ ե քաշում:

Մոտեցավ:

— Բարի որ, կուլակ Պետրոս բիձա, — կատա-
կի տվեց «գեմլամեր» Գասպարը:

— Աստծու բարին, Գասպար:

— Այ մարդ, խեր լինի, ելի նոթերդ կի-
տել ես:

— Ի՞նչ խեր, ի՞նչ բան, այ բալամ: Են բառ-
բանկ են, ինչ զահրումար են. թամամ ելել են
ջրի լերես:

— Վհնց: ||

— Ասում են՝ շատ ենք աշխատում, փողը
քիչ ես տալիս, նեղացնում ես: Ախր չի կարելի,
ե. Յես եմ իրենց մշակը, թե՞ իրենք՝ իմը:

— Փոխվել ե աշխարհը, Պետրոս ամի, փոխ-
վել ե: Են հայվան մշակն ել փոր մարդամեջ
խառնվի, ել աշխարհ կմնա իր տեղը...

Ու լռեց:

Չեր խոսում նաև Պետրոս ամին:

Յերկուսն ել մտածում ելին:

«Ձեմլամերը» կամաց-կամաց սկսեց ավելի
և ավելի խորը մտածել. մտածեց և հիշեց ան-
ցած ժամանակները:—

Չորս-հինգ հոգի հեան առած, դլուղի քոխ-
վի հետ միասին գնում ելին դաշտ և սկսում ելին

չափել: Գլուղի հարուստներն արդեն ապահով
ելին և հանգիստ կերպով իրենց արտերն ելին
վարում: Նրանք դիտելին, փոր չափեն վամ չչա-
փեն—միևնույնն ե, իրենց հողերը չեն վերցնե-
լու. դեռ մի բան ել կավեացնեն:

— Վս, վս, վս, խեր լինի, ես վհնց, բղա-
վում եր մի կողմից իր արտը վարող Ոհաննեսը.—
Ես ի՞նչ խաբար ե: Սեյրան եք եկել...

— Ի՞նչ սեյրան, Ոհաննես ջան, հողաբաժա-
նութունն ե. մեռանք չափելով,—պատասխանում
եր քյոխվան:

— Դժվար ե, շատ դժվար, — ավելացնում եր
«գեմլամերը»:

— Դե եկեք նստեք, մի քիչ հանգստացեք,—
ասում եր ելի Ոհաննեսը: Տանից հաց ու մաց են
բերել. փոր ուտեմ, ըսկի ժամանակ չունեցա: Մի-
մի կտոր հաց զենք բերաններս, ելի վեր կկե-
նանք մեր գործին...

— Ուշանում ենք ախր, — ասում եր քյոխվան
կես բերան:

— Խի՞ չեք ուշանում, հլա որ շատ կա:

Ու նստում ելին:

Ոհաննեսը հանում եր տոպրակի կամ խուր-
ջնի միջից նոր թխված հաց, պանիր, ձվածեղ,
ու մեկ ել տեանես, պուպուստ... ողու շիշը:

— Վս, այ տղա, դու ամբոն ես վարում,

թէ պիտանիցութիւնն ես անում, — ծիծաղում եր քչոխման:

— Կարելի չա, — աչքով եր անում Ոհաննէսը, — մեկ-մեկ՝ վնաս չունի խմելը:

Յեւ արտի գլխին նստած, սկսում ելին լավ ուտել ու խմել...

Դէ, գրանից հետո, կուլքն ել գիտե, թե ում է շատ հոգաբաժին ընկնելու, ում՝ քիչ: Կամ ում է ընկնելու հողի լավը, ում՝ հողի վատը:

Դէ, նրանք ել «պատվի տակ» մնացող մարդիկ չեյին: Հետեւալ ուրը քչոխման մի վոչխար եր ստանում, ինքը՝ մի գառ:

Գասպարը հառաչեց.

— Ձե, հիմի ըսկի լավ չեն չափում...

— Ի՞նչը, — գարմացավ Պետրոս ամին:

— Արտերը. ըսկի չափել չեն իմանում: Տեսնես վճիւր թոկից փախածներին բռնել, գեմլամեր են դարձրել... վոր մտիկ եմ տալի, ըսկի գլուխս չի մտնում դրանց չափածը:

— Ըմմ... — համաձայնվեց Պետրոս ամին

— Սուտ եմ ասում...

— Ի՞նչն է սուտ: Եդ լավ, եդ աղիդ հողերն առան, տվեցին քչախիբ-քչուտուբին: Ել գեղամիջում վոչ մեծ ա մնացել, վոչ մեծի պատիվ իմացող: Բա եդ աղիդ հողերն եգպես մարդու կտան...

— Ձե, Պետրոս, հիմի լավ չեն չափում, —

ասավ Գասպարը մի տնգամ ել և վեր կացավ:

— Ո՞ւր ես գնում, մասլահաթ ենք անում, ելի:

— Գնամ մի հատ գեղամեջ, տեսնեմ ինչ կա: Ասում են խրճիթումը դադեթ ա եկել, գրած ա, վոր կառավարութեանը գեմլամեր ա հարկավոր: Բալքի, ասում եմ, ինձ ել ընդունեն, ապրենք ես քամբախտ աշխարհում:

— Հա՛յ, թե եգպիսի մի բան կլիներ, հա՛, — ուրախացավ Պետրոս ամին, վորը ժամանակին քիչ ոգուտ չեր տեսել «գեմլամեր» Գասպարից:

— Տեսնենք վոնց կլինի, — ասաց Գասպարն ու կամաց-կամաց վերկենալով, քայլերն ուղղեց դեպի խրճիթ-ընթերցարան:

Հասնելով խրճիթ-ընթերցարան, նա մոտեցավ վարիչին, վոր մի կոմիտիտական եր, նույն գլուղացի:

— Աղա, գաղեթի վճիւր նոմերումն ա գրած, վոր կառավարութեանը գեմլամեր ա հարկավոր:

Խրճիթ-ընթերցարանի վարիչը գտավ նրա ուղած համարն ու տվեց «գեմլամերին», քթի տակ աննկատելի կերպով ծիծաղելով:

«Ձեմլամեր» Գասպարը բաց արեց թերթը, հայտարարութիւնը գտավ և սկսեց կարդալ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հողօգտագործի համար հարկավոր
է մի փորձված հողաչափ, բարձրագույն
կրթութեան համապատասխան վկայա-
կաններով:

Գասպարն աչքերը չուեց:

Նա նորից կարգաց: Բայց վոչ մի ոգուտ
դրանից: Կարծես թերթի այդ եջից, այդ հալ-
տաքարութիւնը ծիծաղում էր իր վրա և ա-
սում էր. —

— Ե՛, քու դարն անցել է. Գասպար դու
եղ «գեմլամեր» չես, դու մեռած մարդ ես:

Յերբ վերջիվերջո համոզվեց, վոր դա իր
բանը չի, Գասպարը թերթը վայր դրեց սեղանին
և կամաց դուրս չեկավ խրճիթ-ընթերցարանից:

Կոմյերիտականը նրա չետեից սկսեց բարձ-
րաձայն ծիծաղել:

— Ե՛հ, քանդվի աշխարհը, վոնց վոր քանդ-
վել է, նորից տրանջաց «գեմլամերը»: Իսկի մի
կարգին, խելքը գլխին գեմլամեր. չունի ես կա-
ռավարութիւնը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	12
1. Բանփորուհին	3
2. Մարմնի ձախը	11
3. «Զեմլամերը»	51

453

Մկրտիչ Արմեն
ՐԱՅՏԿԱՅԻ
Շասթ Լ.



ԳԻՆԵՐ 20 ԿՈՊ.

2013

